ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ՍՅՈՒՆԻՔԻ ՄԱՐԶԻ ԳՈՐԻՍ
ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ 2/3

Ք. Գորիս 09 մարտ 2022թ

ԳՈՐԻՍ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ 2022 ԹՎԱԿԱՆԻ ՄԱՐՏԻ 09-Ի ԱՎԱԳԱՆՈՒ ԵՐԿՐՈՐԴ ՆՍՏԱՇՐՋԱՆԻ ԱՐՏԱՀԵՐԹՆԻՍՏԻ

Նիստն արձանագրում է աշխատակազմի քարտուղար՝ Լ. Ղուկասյանը:

Նիստին մասնակցում են Գորիս համայնքի ավագանու 21 անդամից 15-ը՝ Ա. Աղաջանյանը, Մ. Արզումանյան, Ա. Գալստյանը, Հ. Դիլանչյանը, Կ. Լազարյանը, Գ. Հակոբյանը Մ. Հակոբյանը, Մ. Հովսեփյանը, Ի. Յոլյանը, Ա. Սոնյանը, Ա. Տոռոզյանը, Ն. Օրդյանը:

Նիստը վարում է Գորիս համայնքի ղեկավարի առաջին տեղակալ Արտյոմ Աղաջանյանը:

Գորիս համայնքի ղեկավարի առաջին տեղակալ Արտյոմ Աղաջանյանի նախաձեռնությամբ հրավիրված արտահերթ նիստը նվիրված էր հայ-ադրբեջանական սահմանի արևմտյան հատվածում տեղակայված հայկական մարտական դիրքերի ուղղությամբ մահացու հրազենային վիրավորում ստացած զինծառայող, ՀՀ Սյունիքի մարզի Գորիս համայնքի Ակներ բնակավայրի բնակիչ Հրաչյա Մանասարյանի հուղարկավորության կազմակերմանը:

Ներկաները 1 րոպե լռությամբ հարգեցին զոհված զինծառայողի հիշատակը:

Ա. Աղաջանյանը ավագանուն ներկայացրեց երկրորդ նստաշրջանի արտահերթ նիստի օրակարգը՝

ԶՈՀՎԱԾ ԶԻՆԾԱՌԱՅՈՂ ՀՐԱՉՅԱ ՄԱՆԱՍԱՐՅԱՆԻ ՀՈՒՂԱՐԿԱՎՈՐՈՒԹՅՈՒՆԸ ԿԱԶՄԱԿԵՐՊԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Որոշման նախագծի քվեարկության արդյունքներով՝ կողմ՝ 12, դեմ 0, ձեռնպահ՝ 0 ավագանին որոշեց՝

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 57-րդ հոդվածի 2-րդ մասով, 65-րդ հոդվածով (նախաձեռնությունը համայնքի ղեկավարի առաջին տեղակալի)

Հաստատել Հայաստանի Հանրապետության Սյունիքի մարզի Գորիս համայնքի ավագանու 2022 թվականի մարտի 9-ի արտահերթ նիստի օրակարգը

1. ԶՈՀՎԱԾ ԶԻՆԾԱՌԱՅՈՂ ՀՐԱՉՅԱ ՄԱՆԱՍԱՐՅԱՆԻ ՀՈՒՂԱՐԿԱՎՈՐՈՒԹՅՈՒՆԸ ԿԱԶՄԱԿԵՐՊԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Օրակարգի 1-ին հարց՝

ԶՈՀՎԱԾ ԶԻՆԾԱՌԱՅՈՂ ՀՐԱՉՅԱ ՄԱՆԱՍԱՐՅԱՆԻ ՀՈՒՂԱՐԿԱՎՈՐՈՒԹՅՈՒՆԸ ԿԱԶՄԱԿԵՐՊԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Զեկուցող՝ Արտյոմ Աղաջանյան

Որոշման նախագծի քվեարկության արդյունքներով՝ կողմ՝ 12, դեմ 0, ձեռնպահ՝ 0 ավագանին որոշեց՝

Ղեկավարվելով «Տեղական ինքնառավարման մասին» ՀՀ օրենքի 18-րդ հոդվածի դրույթներով, 57-րդ հոդվածի 2-րդ մասով, «Բյուջետային համակարգի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 29-րդ հոդվածի 5-րդ մասով

1.Հայ-ադրբեջանական սահմանի արևմտյան հատվածում տեղակայված հայկական մարտական դիրքերի ուղղությամբ մահացու հրազենային վիրավորում ստացած զինծառայող, ՀՀ Սյունիքի մարզի Գորիս համայնքի Ակներ բնակավայրի բնակիչ Հրաչյա Մանասարյանի հուղարկավորությունը կազմակերպելու նպատակով Գորիս համայնքի վարչական բյուջեի պահուստային ֆոնդից հատկացնել 500 000 /հինգ հարյուր հազար/ ՀՀ դրամ:

2.Համայնքի ղեկավարի առաջին տեղակալին՝ ապահովել սույն որոշումից բխող գործառույթների իրականացումը:

ԱՂԱՋԱՆՅԱՆ ԱՐՏՅՈՄ

ԱՐԶՈՒՄԱՆՅԱՆ ՄՀԵՐ

ԳԱԼՍՏՅԱՆ ԱՆԻ

ԴԻԼԱՆՉՅԱՆ ՀԵՐՄԻՆԵ

ԼԱՉԱՐՅԱՆ ԿԱՐԵՆ

ՀԱԿՈԲՅԱՆ ԳՈՒՐԳԵՆ

ՀԱԿՈԲՅԱՆ ՄԱՐԻՆԵ

ՀՈՎՍԵՓՅԱՆ ՄԵՆՈՒԱ

ՅՈԼՅԱՆ ԻՐԻՆԱ

ՍՈՆՅԱՆ ԱՐՄԵՆՈՒՀԻ

ՏՈՌՈՉՅԱՆ ԱՐՏԱԿ

ՕՐԴՅԱՆ ՆԱՐԵԿ

ԱՐՁԱՆԱԳՐՈՂ՝ ԼՈՒՍԻՆԵ ՂՈՒԿԱՍՅԱՆ

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐԻ ԱՌԱՋԻՆ ՏԵՂԱԿԱԼ՝ ԱՐՏՅՈՄ ԱՂԱՋԱՆՅԱՆ

<<09>> մարտ 2022թ.